11°. Ի ժամանակի դարպասի ողորմութեան, Խորհրդականք և Մերունիք պարտին գտանիլ. և Խորհրդական գրագիրն անպատճառ գրեսցէ զանուանս ուխտաւորաց և զտուրս նոցա ըստ որքանութեան յատուկ տումարաւ. և 'ի տալ ուխտաւորաց զդրամն նշանագրեսցէ միշտ և Դարպասին և Ս. Յարութեան Ռէյիզն և Ճառաճին առանձին մի ինչ առցեն առանց Խորհրդականաց եւ գրագրին գիտութեան եւ գրութեան, և այնպէս տումարքն պարտին երկու լինիլ. և յետ Զատկին յատկապէս 'ի մայր տումարն արձանագրել յանուանէ և ըստ գումարիցն յիրատ գրել։

Բայց և յաւուր եկեալ դարպասական և իւղագին դրամքն քսակով կնքեալ յամենայն երեկոյի յօրթայի սընտուկն դիցեն անպատճառ նշանագրութեամբ որքանութեան և տեսակին։ Եւ որքան հնար է սիրով և յորդորելով զուխտաւորսն ջանասցեն Ս. Հարքն շահել և յօժարեցուցանել 'ի տուրս, որ առաւել արդիւնաւոր լինել երեւի. զի լաւ է սիրով զսիրտ ժողովրդոց գրաւել, քան բռնութեամբ։

12°. Ի մէջ Ս. Եկեղեցւոյ եղեալ ամենայն կերպ անօթք եւ թախտքմք ձեռամբ Խորհրդականաց 'ի տումար առեալ յանձնեսցեն Աւագ Լուսարարին, և մին 'ի տումարաց կացցէ 'ի խորհրդարանին, և հետ զհետէ եկեալ յիշատակիքն յերկուս տումարս եւս արձանասցին։ Նոյնպէս և Զուխտանն և Մաղազայից և Մոմատան և դրքատան և ամենայն եկեղեցեաց լիցի անպատճառ։

Եւս և մեռեալ միաբանից և անժառանգ ուխտաւորաց ինչք և դրամք Խորհրդականք կալցեն, եւ գրեսցեն յարդիւնս ըստ սովորութեան Ս. Աթոռոյն։

13°. Թէ Վէքիլ Թէ Զուխտաճի Թէ Թերճիման և Թէ ով ոք և իցէ 'ի գլխաւոր գործակալաց եւ հասարակաց, բաց 'ի յատկացեալ կանոնական տրոց, մի իշխեսցէ ինքնագլուխ տալ ինչ կամ առնուլ կամ գործել, եթէ չիցեն տեղեակ կամ գիտակ եօթն Խորհրդականք. նոյնպէս եւ ինքեանք իսկ Խորհրդականք մի' համարձակեսցին վասն ինչ եւ իցէ պատճառաց 'ի տուրս չափազանցս առ Փաշայս և առ Մոլլայս և առ ո՞ և իցէ բռնաւորս, մինչչեւ իցեն ծանուցեալ մեզ։